ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԻԶՄԻՐ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 3 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1884 — ԹԻՒ 1321

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՀԱՏԸ 4 ՄԻԼԻԱՐԴ | ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ | ՀԱՏԸ 4 ՄԻԼԻԱՐԴ

Ց. Գ. ՍԱՂԱՖԵԱՆ
Համարատու — Տնօրէն

ՏԱՐԵԴԻՆ ԿԱՆԽԻԿ

ԻԶՄԻՐ	Օամ. տակի	1
ՊՈՒՐՍԱ	Մէնթիպէյ	6
ՕՏԱՐ ԵՐԿԻՐ	Ֆրանք	25

ԾԱՆՈՒՑԱԳԻՆ

3	դրուշ տողը	ՄԻԿ ԱՆԳԱՄ
2	դրուշ	ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ
60	փարա	ԵՐԵՔ ԱՆԳԱՄ

Գ. Գ. ՊԱԼՔԱՋԱԵՐԵԱՆ
Հիմնադիր

Ա. Կ. ԱՂԱՋԱՐԵԱՆ, կը տնօրինէ բաժանորդագրութեան եւ ծանուցման վերաբերեալ բոլոր գործերը։ Շիշէ-ճիլէր, Ֆատտէսի Զինկիրլարա Ֆէրիսանէ

Որ եւ է գրութիւն, յօդուածներ կամ նամակներ, որ ուղղուին ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ կը վերաբերի, տնօրէնին կը դրկուի։ Էվվէլ խան թիւ 17

ԻԶՄԻՐ, ՁՈՐԵՔ 3/15 ՀՈԿՏ. 1884

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՕՐԱԳՐԱՑ

ՍԹԱՆՈԱՐՑ լրագրոյ Վիէննայի թղթակիցը կը գրէ թէ Վիէննա հասած տեղեկութեանց համեմատ Զինաստանի կայսրուհին տրամադիր է պայման մը կնքել Գաղղիոյ հետ պատերազմական տուգանք վճարելով։ Կայսրուհին կուզէ որ այս տուգանքը վճարուի տարուէ տարի Թանկինի, Բանթոնի կամ Թիէն Ցինի կայսերական մաքսատանց հասոյթներով։ Զին կառավարութիւնն ալ, իր կողմէ, կուզէ որ պետութեան ծովեզերեայ քաղաք մը, Բէլունկը հատնորէն, թողուի յերաշխաւորութիւն տալու համար վճարման։

ԿԱԶԷԹ ալ լ'Ալլըմանը տիւնոա լրագիրն ընդհանրապէս անհաւանական կը նկատէ որ Երկնային Պետութիւնը Գաղղիոյ հետ կարգադրութեան մը մասին համաձայնի, եւ որ բաժին ապացոյց առաջ կը բերէ այն չշնաբերականը, զոր Զինաց կառավարութիւնն ուղղեց մեծ տերութեանց, նաեւ կայսրուհւոյն այն քնթացքը՝ զոր ունեցաւ չինական բարձրաստիճան պաշտօնատրաց դէմ, երբ ասոնք բանակցութեանց ընդհատումէն առաջ, տուգանք վճարել կառաջարկէին Լանկսոնի խնդրոյն համար։ Այս իրողութիւնք, կըսէ պաշտօնական թերթը, չեն ապացուցաներ որ Զինաստան արամադիր եղած ըլլայ խաղաղութիւն ընելու։

ԼԸ ԹԱՆ լրագիրը վերոյիշեալ լրագրոյ յօդուածին հեղինակութիւնն հրատարակելէ եւս, կըսէ.—Պէտք է դիտել թէ Հիւսիսային Ամմանիոյ «Կազէթին» փաստ յուլիս ամսոյ թուականաւ երկու գրութեանց վրայ կը յենու, թէ՝ այդ թուականէն ի վեր կայսրութիւնը փոխուեցաւ այն արկածից պատճառաւ, որք պատահեցան չինական եղերց վրայ եւ որք կը պատահին այժմ Բէլունկի մէջ։ Փաստ Զէտի նաւարանին եւ չինական նաւատորմին կործանումը Թիէն Ցինի դաշնագրութեան բանաբերման պատուհան եղաւ։ Բէլունկն աւանդ է մեզ հիմայ։

Կարելի է որ, կը յաւելու Բարիզեան թերթը, այս երկու պատահարք ներգործութիւն մ'ունենան Փէքինի արքունեաց որոշումներուն վրայ, և Լի Հանկ Զանկ, որ կրկին իր պաշտօնէն անցաւ, բաւական իշխանութիւն դատ ըլլայ բանակցութիւնները վերսկսելու հրաման ստանալու համար կայսրուհւոյն կողմանէ։ Պարտ է յաւելուլ որ, զինուորական գործողութեանց հակառակ, Փէքինի արքունիքը Թիէն Ցինի դաշնագրութիւնն հուչակած չէ և այժմ պատերազմական տուգանաց վրայ է խնդիրը, որ թերևս աւելի դիւրին ըլլայ կարգադրել Զինացւոց հետ, երբ նկատեն զայն իրը վճարուած Բէլունկի վերստացման համար։

ՄԱՆՉԷՍԹԷՐ ԿՈՒԱՐՏԻԱՆի Լոնտոնէն ուղղեալ նամակի մը համեմատ Զինացիք մտադիր են եղեր Թագաւորէն կառավարութեան դիմել և գանդատիլ, այն այցելութեան առթիւ զոր Գաղղիացի նաւերն քրին չինացի վաճառականներ բեռնաւորեալ նգլիական նաւերուն։ Զինաց փանոը կըկայանայ սա եղելութեան մէջ թէ, նաւուց այցելութիւնը միմիայն պատերազմի ժամանակ կըրնայ ըլլալ ըստ իրաւանց, իսկ եթէ այժմ պատերազմի վիճակ կայ, չէզոք տերութիւնք կը պարտաւորին ուրեմն իրենց նաւահանգիստները փակել պատերազմողաց համար։ Զինաստան, կ'ըսէ այդ նամակը, սրտմտած է Գաղղիացւոյ՝ Հանկ Դանկը գործածելուն համար, որ թշնամութիւնք սկսէլ ի վեր իրը հիմ ծառայեց նոցա բոլոր զինուորական գործողութեանց։ Դժուար է գիտնալ թէ Անգլիա ի՞նչպէս պիտի կրնայ փակել իր նաւահանգիստները Զինաց համար, երբ ո՛չ մին և ո՛չ միւսը պատերազմ հրատարակած չեն, և կամ այս երկու տերութեանց մէջ գանուող վիճաբանական կերպարանն ղեցած չէ։ Զինացիք կ'ըսեն թէ, այժմ պատերազմի վիճակը գոյութիւն ունի։ Կ'ուզեն որ Անգլիա չէզոքութիւն յայտարարէ այն իրողութեանց վրայ որք մօտերս կատարուեցան։

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐԸ

ՀԱՆՈՅԻ 9 հոկտ.—Երկկնէկրիկ զօրավարը 6000 չինացի կանոնաւոր զօրքերու դէմ ճակատամարտեցաւ որք ի Քէփ քաշուած էին։ Քէփը յարձակմամբ առնուեցաւ։ Վեց հարիւր հոգի սպաննուեցան չինական զօրքէն և իրենց բոլոր պաշարները, ձիերն ու ջորիները գրաւուեցան։ Գաղղիացիք քսան մեռեալ և վիրաւոր ունեցան։

Նէկրիէ զօրավարը թեմեա կերպով վիրաւորեցաւ։

—

ԼՈՆԴՈՆ 9 հոկտ.—կառավարութիւնն որոշեց Աւստրալական Ափրիկէոյ մէջ Պէչիւանէոյ արշաւանքները դադրիլ։

—

ԱԹԷՆՔ 8 հոկտ.—Թագաւորն և Թագուհին Երէկ Փիրէա եկան և ընդունուեցան նախարարաց կողմանէ։ Նոյին Վեհափառութիւնք մեծ հանդիսիւ ընդունեցան Աթէնքի մէջ անբաւ բազմութեան մը ցնծութեան աղաղակներով, Թագաւորը չնորհակալութիւն յայտնեց բազմութեան

—

ԳԱՀԻՐԷ 7 հոկտ.— Տօնկոլոյի Միւտիրն հեռագրած է թէ Սուդանի չոգենաւն, ուր կը գտնուէր տեղական գնդապետ Սիր Հ. Սթուարտ, ալէկածեցաւ Վակիկառանդի ժայռերուն մօտ։ Սթուարտ և իր քնկերք նպաստուեցան Պէտէվիներու կողմանէ, որք իրենց ծուղակը ձգած էին զանոնք։

—

ՀՌՈՄ 9 հոկտ.—Այսօր մրրիկ մը ծագեցաւ Բաթանայի վրայ, որմէ հարիւր հոգի չափ սպաննուեցան և 350 հոգի վիրաւորեցան։

—

ԱԹԷՆՔ 10 հոկ.—Երեսփոխանաց ժողովը նոյեմբեր 8ին պիտի դումարի։

—

ՀՌՈՄ 10 հոկտ.—Այսօր քոլէրայէն մեռան ի Նաբոլի 18, ի Ճէնովա 13, յայլեւայլ կողմունս 62, բնդամենը 93 հոգի։

Կաղէթ Տիվլոմատիքի տուեալներուն համեմատ, կառուսերէն Դարատաղ այժմ անհուն չինութիւններով զբաղած է։ Ամէն կողմ տաներ, չուկաներ կը կառուցուին և ճանապարհներ կը բացուին։ Բոսկորիցան Երկաթի քաղաքներն եւրոպական կերպարանք մը կառնուն, և ինչպէս որ հին Բոսկորիցան վերանորոգել խիստ դժուար պիտի ըլլար, ուստի կառավարութեան օգնութեամբ գրեթէ բոլորովին նոր քաղաք մը չինուեցաւ։

Շատ երկրաչափներ և ճարտարապետներ զբաղած են երկաթուղոյ մը ծրագրով, որ պիտի տարածի յիսուն հազարամեթր երկայնութեամբ, ընդմէջ Փլոմնիչայի (Ճքոարայի լճին եզերքը) և Բոսկորիցա ու Տանիլովկրատա քաղաքաց։

—

Աւստրիական և հունգարական լրագիրք կը յայտարարեն թէ Ռուսիա և Աւստրիա նոր միութիւն մը կազմեր են և թէ խիստ մօտերս Զարը Վիէննա երթալով այդ միութիւնը պիտի վաւերացուի։

—

Վիէննայէն կը հեռագրեն անգլիական լրագրոյ թէ Բանանի կոմիք ծանր հիւանդութիւն մը ստացած է։ Սթանսարտի թղթակիցը կըսէ թէ նախարարին հիւանդութիւնն խոքային բարբոքում մ'է։

ԳՐԱԿԱՆ

ԽՆԴԻՐ ԳԱՂԳԻԵՐԵՆԷ Ի ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ ՇԱՐԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին մասին մէջ կը յայտնէ ընդհանուր անհմտութենէ յառաջ եկած սխալներ, որոնք, սակայն ներուի մեղ ըսել զի մեծագոյն մասամբ կամ բծախնդրութիւններ են, կամ անուշադրութեամբ և անփութութեամբ գործուած սխալներ։

Աւելորդ անտարակուսելի է որ Ave Maria ապիտորէն չէ թարգմանուած Հաւատով խոսովանիմ, այլ հայ ճաշակի յարմար լինելու փափաքով մը։ Իսկ խոսովանիմ բառին յոգնակի դրուելու մասին՝ կրնայ ըսուիլ թէ կամ տպագրական սխալ մ'է, կամ հաւանական է որ թարգմանիչը քննադատին չափ ջերմեռանդութիւն ունեցած չէ այդ տողերը ճշդութեամբ ուսնելու։

Laetare բառին՝ ցնծութեան կիւրակէ ըսել սխալ մը չէ, ոչ ալ անհմտութիւն, այլ ոչ այնքան ընտիր թարգմանութիւն մը։ Եթէ յորդոյ թարգմանիչը միևնոյն բառին նշանակութիւնը չգիտնար՝ անշուշտ ոսկ ցնծա՛, խնդա՛ պիտի թարգմանէր, բայց օրովհետև ըմբռներ է որ յատկապէս կիրակի օր մը կընշանակէ այն, կրնանք ըսել թէ կամ աւելի համաձայնութիւն մը գործելու համար ցնծութեան կիւրակէ ըսեր է, կամ անփոյթ գտնուեր է զայն բացորոշակի մեկնելու։

Շատ մը օտար բառեր նոյնութեամբ կամ փոքր ինչ փոփոխութեամբ հայերէնի թարգմանել Մեծ. Նուպարեանի յատուկ չէ, այլ մեր ամէն գրագէտներու սովորական թերութիւնն է, և որքան ալ գրական տեսակէտով աններելի լինի, կրնանք ըսել թէ Վիկտոր-Հիւկոյի անթիւ և անհամար նորաբանութիւններու առջև անոր ծանրութիւնը կը մեղմի։ Adrézarach բառ մը ազատագրախութիւնները անխտիր հայացնելու անհուն կարողութիւն մը չենթադրեր, ըստ որում այդ նորաբանութիւններ նոյն իսկ ամենէն քաջ գաղղիագէտներու անհասկանալի են, մինչդեռ հնարին չէ ամէն գրագէտի քմահաճին լեզուին վերահասու լինիլ։

Ընդհանուր անհմտութեան կարգին մէջ կը դասէ նաև Մեծ. Նորայր՝ Նոգր-Տամի թարգմանութեան առթիւ Մեծ. Մ. Նուպարեանի գործած սխալները ինչպէս պատմութեան նոյն պէս և իտալերէն, լատիներէն, սպաներէն լեզուներու նկատմամբ։ Թողլով որ մեծագոյն մասամբ բծախնդրութիւններ են այդ ցոյց տրուած սխալներ, այլ նոյն իսկ կարելի է ըսել որ ուսման այդ ճիւղերու գիտութիւնը յարաբերութիւն չունի Գաղղիերէնէ ի Հայ բառգիրք մը լինելու հետ, և ինչ որ է Նուպարեան բառարանի՝ Նորայրի բառգիրքը գերազանցելու անկարելիութիւնը հաստատելու համար այսպիսի սխալներ թուել, միևնոյն է ըսել թէ,

— Պ. Նուպար, օրովհետև դուք չէք գիտեր լատիներէն, սպաներէն, իտալերէն, գերմաներէն, յունարէն կամ թէ արաբերէն, պարսկերէն, ռուսերէն և չիներէն լեզուները, որովհետև և չէք գիտեր թէ Թէոֆիլ անուամբ քանի հեղինակ կայ, Ռոսին անուամբ քանի բանաստեղծ, Լուի անուամբ քանի թագաւոր, և Լուսինեան անուամբ քանի իշխան, որովհետև չէք գիտեր թէ Վոլթէր ըսելու տեղ Ֆէրնէի պատրիարք կ'ըսուի և Ժընկվի իմաստասէրը ըսելով Ժ. Ժ. Ռուսսօ կը ակնարկուի, կամ թէ որովհետև այսպիսի տիտղոսները ձեր քմաց համաձայն կը թարգմանէք, դուք չէք կրնար ինձմէ աղէկ կամ ինձի պէս Գաղղիերէնէ Հայերէն բառարան մը յօրինել։»

Թէև իրաւ է որ Նուպարեան բառարանը ոչ լատիներէն, ոչ իտալերէն, ոչ սպաներէն և ոչ ալ յատուկ անուններու բառարան մ'է, այլ պարզապէս գաղղիերէնէ աշխարհիկ բարբառով բառգիրք մը։

Մեծ. Նորայրի քննադատութեան ամենէն կարևոր կէտը՝ գլխաւորաբար երկրորդ մասը կրնայ համարուիլ, քանի որ բուն իսկ Գաղղիերէն լեզուի անտեղեկութենէ յառաջ եկած սխալներ ցոյց տալով՝ բնականաբար իր առաջադրած նպատակին ծառայելու աւելի յարմարութիւն մը ունի։ բայց ասոնք ևս ինչ ինչ դիտելի կէտեր պակաս չեն։ Ինչպէս կարելի է կարծել թէ թարգմանիչ մը որ Նոգր-Տամի պէս դժուար գործի մը թարգմանութեան մէջ սոսկ մի քանի սխալներ գործած է, նոյն իսկ ըստ Պ. Նորայրի, և որ արդէն գալ և այլ աշխատութիւններով ալ ծանօթ է հայ գրական ասպարէզի վրայ, և հանրաւ անդամ ունի, ի՞նչպէս կարելի է կարծել թէ, կըսենք, Très redouté բառը՝ ամենահեղ թարգմանած լինի։ Եթէ Պ. Նորայր աւելի հանդարտ արտով մը կատարէր իր քննադատութիւնը՝ անշուշտ պիտի ըմբռնէր թէ, փոխանակ ամենահեղ ըսուելու ամենահեղ ըսուած է։ Թարգմանութիւններու և գրութիւններու մէջ ստէպ կրպատահին կէտեր որ ճշդութենէ հեռի գանուին, բայց այսպիսի հակասական սխալ մը դպրոցական համբակ աշակերտներէ անգամ անհնար է ապասել։ Տպագրական սխալները հեղինակին կամ գրոզին չեն վերագրուիր անշուշտ։

Différend բառը սակարկութեան առթիւ երկու կողմի ունեցած տարաձայնութեան համար։ [illegible] միշտ վիճում։ Ուստի երբ Պ. Նուպար վէճ բառին անմիջապէս ետք différend պարբերութիւնն կը թարգմանէ՝ յայտնի է թէ կրկնութիւն մը չընելու կամ վէճ բառին նշանակութեամբ ուրիշ աւելի յարմար բառ մը փնտռելու անփոյթ գտնուելուն համար է, և ոչ թէ անհմտութեան պատճառաւ։

Vitraux hauts en couleur «Գոյնագեղ բարձր ապակիներ» պէտք չէ թարգմանել, այլ պայծառ երանգ, կամ գունեան, ինչպէս կըսէ Պ. Նորայր և կամ թէ գունեղ ապակի։ Սակայն անպատեհ չէ ասոնք կրկնել որ այս սխալ բառարան մը չինելու անկարողութիւն չհաստատեր, ըստ որում բառական սխալ չէ այն, այլ աւելի իմաստի կամ քերականական։

Ceci այս, cela այն եթէ ունին տարբերութիւն մը գաղղիերէնի մէջ հայերէնի մէջ ստէպ կը չփոթուին։ ուստի այս պիտի սպաննէ զայս որքան ալ ճշդութիւն չունենայ՝ սխալ չըրնար ըսուիլ հայերէնի մէջ։

Շատ քիչ անձինք կրնան գտնուիլ Լուսաւորչական հայերու մէջ, որ Հաւատքի եկեղեցւոյ սուրբերը և սրբուհիներն ճանչնան, և գիտնան թէ անոնց տօները տարուան ո՛ր օրերը կը դիպուտահին, այս պատճառաւ է որ սուրբ Պաւլն՝ սուրբ Պօղոսի՝ հետ չփոթած է Պ. Նուպար, բայց նոյն իսկ արևմուտքի մեծահռչակ գիտնականներ ի՞նչեր չեն չփոթեր արեւելքի իրերու մասին։

ԲԱՐԻԶԷՆ ՆԱՄԱԿ

ԵՂԲԱՑՐՈՒԹԻՒՆ
Կոյն և Անդամ-լոյծք։

«Դու կը քայլես ինձ համար և ես կը տեսնեմ քեզ համար։»

«Tu marcheras pour moi et je verrai pour toi.»

Ցարդոյ Խմբագիր,

Իմ խոնարհ շնորհակալիքս յայտնելով Ձեզ նախ փոխարէն այն ազնիւ ասպնջականութեան՝ զոր վայելեմ միշտ Ձեր «Արշալոյսին» մէջ իմ ժողովրդային փաստաբանի դասերովս, համարձակիմ յուզարկել ձեզ այսօր իմ բա-

բեկամ Պ. Լեռենցի «Երկու մուրացիկ» անուն մի գողտրիկ ոտանաւորը՝ զոր Երիտասարդ բանաստեղծը շատոնց ի վեր հիւսած և յուզարկած է ինձ, տարբերս փետրվարի ամսուն մէջ (1)։

Երկու տարիէ ի վեր, ամեն անգամ որ յայց ելայ քաղաքիս Գեղարուեստից-Դիւրհանդէսին՝ հոն՝ բաց ի Ֆրանսացի և օտար նկարչաց և արձանագործներու և մի երկու Հայ պատկերհաններու գեղեցիկ հեղինակութիւններէն՝ որոնց շատերուն նիւթը զիս հրապուրած էր մեծապէս, մասնաւոր ուշադրութեանս և հիացմանս առարկայ էր եղած մի արձան իւր խորհրդաւոր նիւթովը. նիւթ մը՝ որ երբեք մեծ անդրիա գործներու բազկաց մասնաւոր աշխատութեանը ծառայած էր. երբեք հատ առանձին արձաններ էին չինուած նոյն նիւթի վրայ, մին միւսէն գեղաղանց։ Նիւթն էր, երկու երիտասարդ մուրացիկ, մին կոյր և միւսն անդամալոյծ «L'aveugle et le Paralytique»։ Կոյրը, կարող՝ միայն ի քայլել, իսկ անդամալոյծը՝ միայն ի տեսանել. հիւանդութեանց երկու տիրագոյններն էին նկարուած, անկարութեան և տկարութեան երկու մեծ և սոսկալի աստիճանները՝ որք արդարև առանձին առանձին իրենց ենթակայ ազգատներն անօթութեան և մահուան գիրկն առաջնորդող ճանապարհներ են անկասկած։

Կոյրը ներկայացուած էր, բեռնաւորեալ անդամալոյծ երիտասարդով և անդամալոյծը հեծեալ կոյրին ուսերուն վրայ, կրելով իրենց ներքեւ մի գեղեցիկ վերտառութիւն. «Դու ոտքէ ինձ համար, ես ալ աչքէ քեզ համար», որով ահա փոխադարձ եղբայրասէր օգնութեամբ մի մեծ զօրութիւն առանձին ուրեմն՝ երբեմն ասկամալոյծին առողջ աչերով և անդամալոյծն ալ իւր թոյլ ոտները զօրացուցեալ՝ կոյրի կարող ոտներով և այսու հանգիստ չարունակէին իրարու, իրենց դժբաղդ կեանքը մուրացութեան, ի փոքր ինչ հանգիստ և ի գիւրութիւն իրենց և իրենց ընտանեաց՝ թէ ունէին։

Գեղեցիկ և վաճառ օրինակ, մեծ և գովելի յղացումն մտաց, որ արդարև լաւ դասեր կարող է տալ միշտ բոլոր մարդկութեան և բարոյական աշխարհի։ Այս արձանը կարելի է այն համարիլ մի կենդանի խօսուն պատկեր, Բէլճիացւոց այն վսեմ առածին, թէ «Միութիւնը ուժ է» (L'union fait la force). և արդարև ակներև փորձով ապացուցուի այս ահա կոյրի և անդամալոյծի արձանին վրայ և բացայայտ լինի երկուսին իրենց իւրաքանչիւր ընկերութեամբը յառաջ բերած զօրութիւնը. զօրութիւն մի՝ անչնչեալ և անդոյ երկուսին վրայ առանձին առանձին, որ իսկ մեծ է և արդիւնաւոր երկուսին միացեալ կարողութեամբը։

Ափսոս, որ երկու տարիէ ի վեր, հակառակ ջանիցս դեռ չի կարողացայ գտանել մի լուսանկար պատկերն այս արձանին, սիրով զայն ուզէի յուզարկել ի նուէր մեր վարժարաններէն մի քանիին. մանուկներու մատաղ ուղեղին մէջ այդ սիրուն և խորհրդաւոր պատկերով քանի քանի մեծ դասեր չէր կարող տպաւորել բարոյախօս մանկավարժի մը բերանը։ Սակայն, թէ դժբաղդաբար, այդ արձանին փքնտրեցած լուսանկարս չեմ կարող յուզարկել, գոհ եմ որ գէթ կարող եմ Ձեր «Արշալոյսի» էջերուն յանձնել Պ. Լեռենցի մատներու գծածը՝ յորում Կովկասցի այդ նորահաս բանաստեղծը, իւր սիրուն և բնական ոճովը գեղապէս յօրինէ այդ արձանին նիւթն և պատկերը՝ զոր ինձ հետ տեսած էր հերուն աշխարհահանդէսի սրահին մէջ։

Կը յանձնեմ ուրեմն զայն Ձեզ Խմբագիր տէր. Ձեր թերթի էջերուն՝ զոր անշուշտ սիրով պիտի կարդան Ձեր ընթերցողները՝ իմանալու այդ անզուգական արձանին վսեմ նպատակը և ամբողջելու նորա գեղեցիկ սկզբանց մեծ դասը, թէ «Դու ոտքէ ինձ համար, ես աչքէ քեզ համար», «Tu marcheras pour moi et je verrai pour toi.»

Խմբագիր տէր,

Թէ ինչու կը գրեմ այսօր այս արձանի մասին, թէ ինչու կը յուզարկեմ Ձեզ այս մասին գրուած մի ոտանաւոր, պատճառն յառաջիկայն խստանամ գրել Ձեզ։ Ձերդ ան՝ձնուէր

ՅՈՒՍԻՖ Վ. ԱԱՀՐ. Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

Փարիզ, 5 հոկտ. 84.

ԵՐԿՈՒ ՄՈՒՐԱՑԻԿ

Եկեղեցու դրան մոտին
Անդամալոյծ մուրացիկ
Նըստած էր լուռ և անցորդին
Ձեռն էր մեկնում՝ տրեբալիք։

Կարդով նորա հետ կանգնած էր
Մէկ ուրիշը կոյր աչքով։
Մի սև դրամի գուբ յուսով։

Բայց ժողովուրդն առաուտուանէր
Հազիւ տեսնում խեղճերին
Եւ տալիս էր իւր սև դրամներ
Միայն յառաջ մղլուողին։

Անդամալոյծն անշարժ էր
Եւ աննըկատ էլ մընաց,
Կոյրն առաջ գալ անկարող էր
Եւ ստակ չունէր ըստացած։

«Լըսի՛ր», ասաց առաջինը, —
«Կոյր իմ եղբայր, այսպէս մենք
Մեր մանուկներն, մեզ, մեր տունը
Քաղցից պիտի ըսպանենք։

«Առողջ են միշտ իմ աչերը,
Սակայն թոյլ եմ ոտներով,
Դու կոյր ես, բայց քու ոտները
Շատ ամուր են և ուժով։

«Այսուհետև ե՛կ քեզ վերայ
Թող տուր հենցնեմ ու ման գանք։
Ես կըտեսնեմ մեզի ճանգայ,
Դու էլ կերթաս—կը մուրանք։

Կոյրը լսեց նրա խորհուրդը,
Եղաւ նորան բարեկամ
Եւ տեսնելով նրանց՝ անցորդը
Չէր խնայում մի սև դրամ։

Այդուհետև իրենց տները
Միացրին՝ զուարթացած,
Եւ նոցա խեղճ որդիները
Միշտ ունէին պատառ հաց։

Լեռենց

Փարիզ, 18 փետրվար 1884

ԿԱՂՆԻՆ ԵՒ ՈՒՌԻՆ

Սիշալոյսը շառագունուած երկընքում,
Եւ լեռները նընջում հեռուի խորքում,
Աւաւատուան մեղմ հովիկը գետակի
Ալիքների հետ խաղում ազատ, դուրալի։

Շըրջապատուած խոտերով նուրբ
ու դալար՝
Եգրին կանգնած էր մի գոռող կաղնի
ծառ,
Եւ գագաթը, և տերևները նորա
Հպարտ—հպարտ ցըցուած էին պարզ
օդում,

Եւ ցողերը, իրը անդամանդ,
Նոցա վրայ
Զըարթնարար փայլում էին ու զարդարում։

Հէնց գիծ դրան՝ ուռին խոնարհ,
տըրտմաբեր,
Ընդիրելով կոճակներին մըրմունջներ,
Տերևներից իւր թափում էր ցողերը,
Իրը արցունքով յայտնում իւր խորագաւերը։

Փարիզ 8 հոկտեմբեր 1884

ԷԼԻՆՆՇ

ԱՌ ՊՐՈԹԷ

Նորոնոյ-ին

Հիմա քիչ մ՚ալ մեր գործերու վրայ խօսինք, իբրև թէ մինչև այս կէտն ուրիշ գործերու համար խօսած լինէի, իբրև թէ յօդուածս՝ գլխէն մինչև ոտքը դուն ըսէ մէջքը՝ որովհետև տակաւին պիտի շարունակուի՝ միջանկեալ շատախօսութեանց հաւաքածոյ մը չըլլար, արդեօք որքան վրաս պիտի խնդաս ասանք կարդալով, բայց ինչ քնելու է, այնչափ իրեր կան ճառելու և ՀԷեր պատպանձեցնելու՝ որ անդամ մը գրիչ ձեռք առնելուս յօդուածիս մուտքն ու ելքը, յառաջաբանն ու վերջաբանը իրար կըխառնեմ նման Ատոմին որ շատ բառեր գիտնալուն համար փոխանակ զանոնք շարակարգելու ինքն անոնց մէջ կըկորսուի՝ կը չիսթիմ և կը յօրինիմ ճշմարիտ Լափիւրինթոս մը, որքան փախչիմ միջանկեալ պարբերութիւններէ, այնքան անոնցմէ կը բռնուիմ՝ նման այն երազողին որ կաչխատի վազելու և միշտ գտնուած տեղը կըմնայ, ինչպէս կըտեսնես, Պրոմէ, սոյն պահուս իսկ միջանկեալին մէջ կըգտնուիմ, ահա դարձեալ միտքս բան մը եկաւ նոր բառեր ստեղծելու կամ յօրինելու մասին, «գործը գործ կը ծնի» կըսէ առածը, խօսքն ալ խօսք կըբանայ հարկաւ, ուստի [illegible] բարդական հարկ համարելով նախ ըմբնցնենք սա լեզուաբանական քնութիւնը, ԷՐՈՒՆ, արդեօք այս ալ նոր բառ է։ Կարդ մը էրէթներ՝ ժամանակէ մը յետէ մուռնալով իրենց պատուական լեզուն՝ կամ տելի չիտակն ըսելու համար՝ երբեք չորվելով զայն սկսած են օտար բառերն հայերէն չինել և իբրև լեզուի հեղինակ պարծենալ, անուրանալի է սակայն որ ասոնց մէջ կան հազուագիւտներ որոնք մեծ ծառայութիւնք կըմատուցանեն մեր լեզուին, օրինակի համար, Մ-էի խմբագիրն ԷՀԷՆ-ի բառը ԷՐՈՒՆ կըմարդմանէ... Մ-էի՝ ըսի, և միտքս բան մը եկաւ, դարձեալ միջանկեալ՝ կըվախնամ որ այս ՏՂԷՆԷՆ-ը ալ օր մը հոյակապ պիտի հաւատարի... ինչ որ է, շարունակենք, եթէ մեր ազգը «ես ալ լրագիր ունիմ» ըսելու կարող է, այս խօսքն գործով ապացուցանելու համար իսկոյն Մ-էը մէջ տեղ պիտի նետէ,(1) վերցուր Մ-էը կըմնայ հայն առանց լրագրի. վերջապէս եթէ հայն լրագրութեան ինչութիւնը հասկցած է զայս կը պարտաւորի Մ-էին, Մ-է տիրոջս մ՚է փառաւոր տիրոջս, ինչու արդեօք Աբէլէ անոր կը յաջորդէ, ես չեմ ըսեր որ այս վերջինն արժանի՛ է զուրկ է, քիչ հակառակն բոլոր տկարութեամբս կըպնդեմ որ Աբէլէ արժանաւոր յաջորդ մ՚է Մ-էի եթէ իր լեզուի մասին գուցէ անուշադրութեամբ սպըրդած սխալներն ուղղելու և հմուտ թարգմանիչներ գտնելու փոյթ տանի և կամք ունենայ, (սպասէ Պրոմէ, կարդն ասոր ալ պիտի գայ) բայց ինչ ջնաս ունէք փառաւոր տիրոջս մը չթաղելու համար (տիրոջոյ կըմարդուի եղեր, ո՛ հայերէնդ գու, մինչեւ երբ ճեմարանէ զուրկ՝ մեր խորթ լեզուին տակ պիտի խածնուիս ու չարչարուիս) եթէ շաբաթական Մ-էն Աբէլէ՝ և օրական Աբէլէն ալ Մ-է-յորջորջուէին. անցնինք, ասոր համար ուրիշ առթիւ պիտի խօսիմ։ Ըսի թէ ԷՀԷՆ-ԷՐ-ԸՆ-ի թարգմանուեցաւ. արդ կը հարցնեմ՝ քեզ, Պրոմէ, այս բառին որ կողմը չհաւնեցաւ Պ. Զ (Դրուերին նոր Սահակը) և ԸՆԴՈՒՆ թարգմանել զայն. թող Աստուծոյ համար խօսին հայապէտները, այս բառն՝ եթէ երբեք բառ բուսելու արժանի՛ք ունի՝ կրնայ համապատասխանել ԷՀԷՆ-ԷՐԻՆ. ընչապա՞ն, քաջ է, բայց ընչինք կը պաշտաւի. ասի նախ տրամաբանական սխալ մ՚է, երկրորդ, նիհիլիսմներու սկզբան գլխովին ներհակ է, քան որուն նիհիլիսմի՛ք բան մը չեն պաշտեր, մանաւանդ իմ գիտցածս այն է թէ հայերէն ԸՆԴՈՒՆ չընչանակեր, այլ է եթէ Պ. Զ. բառի մը մէջ երկու՝ տաւեր տեսնելուն համար ընչինք սխալ կըհասկնայ.... և որովհետև ամեն մարդ ազատ և կարող կըգտաւնի ինքզինքն բառեր շինելու, այսինքն բառին բուն նշանակութեամբն լեզուն կարգաւորելու, ես ալ իրաւունք չունիմ միթէ ԷՀԷՆ-ԷՐԻՆ իմ ճաշակով թարգմանելու. միտ դիր ուրեմն, Պրոմէ, և տես թէ բառ մը ինչպէս կըշինուի. որովհետև ըսինք թէ նիհիլիսմի՛ք բան մը չեն պաշտեր և ԷՀԷՆ կընչանակէ ՈՒՆԻ, աշխատինք ՈՒՆԻՆ գտնելու, ոչ սակայն խնաստասիրական տեսակէտով՝ բան որում ստեղծագործութեան մէջ ոչինչ չկայ, այլ իր մը գրանելու [illegible] համապատասխանել. ես գտայ այս իրն որ է ՀԷՐՈՒՆ, ուստի նիհիլիսմ կընչանակէ ՀԷՐՈՒՆ. հաւատամ եմ որ ուշադրութիւնդ պիտի գրաւէ այս գիւտն, բայց տակաւին չլմեցաւ, ՀԷՐՈՒՆ կարելի է անախորժ ազդեցութիւն մը ընէ մահկանացուաց ականջին, կակիկցնենք ուրեմն, կարճեցընենք, կակղենք, կըլրնենք զայն, նշանակենք մէկ զերօ որ է 0, ասոր քովն ալ կցնենք Ի-ին հայերէնը որ է Ի-Ն կըլլայ 0Ի-Ն, ինչպէս կըգտնես զայս, Պրոմէ, ինչպէս կըգտնես Ատոմ։ Հապա զերօն հայերէն է, ես չեմ կարծեր, ուստի փոխանակ զերօի՝ որ հայերէն չէ, ըսենք, մեր լեզուին օ տառը գործածելու է, հետևաբար փոխանակ վարժապետ մը իր աշակերտին, ըսելու «ՕՕ Մարկոս 2 թուանշանին քով զերօ մը դնես նէ ինչ կըլլայ», ըսելու է, «Զին քով օ մը դնես նէ ինչ կըլլայ», բայց օ տառն արդէն օտար է, յունարէնէ առնուած է կըսեն, հիմակ ինչ ընելու է, ասոր պատասխանատուն ես չեմ, գանգատողը թող Սահակ Մեսրոպին դիմէ։ Բայց դարձեալ միտքս բան մը եկաւ, գիւտէն դիւտ հանելն է վարպետութիւնը, ըսի թէ ԷՀԷՆ-ԷՐԻՆ հայերէնը կամ ՀԷՐՈՒՆ կամ ՕՒՆ ըլլալու է, և որովհետև զերօն օ տառին նմանն է վեր ի վերոյ, տառը և զերօն իրար չշփոթելու և օտարին կարօտ լինելու վտանգներէն փրկուելու համար տասնց երկուքն ալ մերժելով ԷՀԷՆ-ԷՐԸ ԷՐՈՒՆ կամ՝ ՕՒՆ և կամ ՀՕՒՆ թարգմանելու է, չէ՞ որ ՀԷՐՈՒՆ հաւկիթի և օ տառն ալ օղակի ձևով կլոր է, ի՞նչ կըսես Պրոմէ, ինչպէս եմ, Ատոմ, չմոլորիս իմ վրայ, դու որ սովոր ես զմայլելու և զարմանալու նաև երբ տեսնես թէ մարդ մը կէսօրին կերակուր կուտէ և վրան ալ խահվէ կը խմէ։

Գրուերի Ատոմի աչերն կ՚երևի թէ խոշորացոյցի բացառիկ յատկութիւն մ՚ունին որով միջիւնն առիւծ և լուն փիղ կըտեսնէ, հետևաբար մեր ազգի միակ փառքն եղող Սահակ Մեսրոպն այնպիսիներու կը նմանցնէ և զանոնք նոր ատականով ալ կը մկրտէ սրանք կատարեալ հակառակներ են մեր անմահ թարգմանչաց, ասոնցմէ մին՝ ինչպէս վերն յիշեցի՝ սխալ թարգմանութեանց մասին գրեթէ առաջնակարգ տիրոջոյն արժանացած է, և որովհետև ժամանակ չունիմ իր բոլոր գործերն համառօտիւ իսկ քննելու, բաւ սեպեցի իր ԸՆԴՈՒՆ միայն ներկայացնել զինքն, իսկ միւսը՝ Պ. Մ. (Ատոմին նոր Մեսրոպը) պիտի ներկայացնեմ՝ իր ԷՐՈՒՆ միայն. ըսէ ինձ, Պրոմէ, գու՝ որ գուշակութեան ատուած մ՚ես, ի՞նչ կը հասկընաս այս բառէն, մանաւանդ հայ մահկանացու մը ի՞նչ իմանայ ասով... հայերէն ԷՐՈՒՆ կընչանակէ փայտի կտոր, կոր, տեր. հապա ԷՐՈՒՆ։ Նոր Մեսրոպ արդեօք կըկարծէ թէ մանիկ մ՚է այս, հաբկաւ ԷՐՈՒՆԷՆ խարուած բլլալու է, բայց վարագոյրին վերջին էրէզ մանիկ չէ, այլ բայ է և մինակ գոյր չինիր, այլ -էրէ, -էրուն-ին կըծնի, ԷՐՈՒՆ կընչանակէ վար ագուեող, դէպ ի վար ագուցող. Պ. Մ. կը կարծէ նոր բառ մը ստեղծած կամ յօրինած լինելուով, իսկ ես կըսեմ որ այդ հեղինակ կատարեալ ագէտ մ՚է, ամենագէտ մ՚է, որ իր ԷՐՈՒՆԷՆ ֆրանսերէն abat-jour ս հայացուցած կըգտաւնի ինքզինքն. Գրուերի Ատոմի նոր Մեսրոպն հարկաւ չդիտեր թէ -ուրէ-ին հայերէնն է ը-ՈՒՆՑԻՑ կամ ը-ՈՒՄԷԷ. իսկ եթէ այս բառերն նոր Մեսրոպի ճաշակին չեն յարմարիր, նա ազատ է իր տան մէջ միայն գործածել ԸՐՈՒՆՑԻՑ կամ ԷՐՈՒՄԷԷ, հայ տանիներէ ոչ ոք պարտաւոր է նորա ճաշակին համեմատ շարժիլ և իր անձը չարչարել անիմաստ բառի մը նշանակութիւնը գտնելու ունայն ջանքով... de gustibus non disputatum, կամ gustibus non est disputantebus (1) կ՚ըսէ առածը։ Ասկէ դատ abat-jour բարդ բառն հայերէն բարդ բառի մը թարգմանելու գործին մէջ ինչ դժուարութիւն կար, աշխատինք մենք գտնելու զայն. abat-jour ըլլալ վար դնող, բարդենք զայս և ըսենք ը-ՈՒՆՑԻՑ, հա, հա՛, հա՛, այս չեղաւ, այնպէս չէ՞, ը-ՈՒՄԷԷ, այս ալ նմանեցաւ բայց համով չեղաւ (համով բառ, ո՛ հայերէն,) ո՛ Պրոմէ, մի՛ ծիծաղիր, փոխանակ ինդալու՝ օգնէ ինձ... ո՛հ, գտայ, ինչ ուրախութիւն... գտայ... գըտայ... ԼՈՒՍԱՐԳԵԼ!!! ցնծա՛ ուրեմն, ո՛ Ատոմ, և զմայլէ։

Հիմա կարգն է Աբէլէին. ինչպէս Ռուսերոյ հայ էրէթոյ մէջ համաճարակ հիւանդութեան մը բնութիւնն ստացած է հայերէն բառեր չգործածել (հարկաւ իրենց տգիտութեան պատճառաւ) և անոնց տեղ նշանակել օտար բառեր այնպիսի տառադարձութեամբ որով ԺՈՒՆԸ կը գերազանցուի, նոյնպէս Թուրքիոյ հայոց մէջ ալ ախտ մ՚եղած է օտար լեզուաց անթարգմանելի և ժողովրդական բառերն հայացնելու ունայն երևակայութիւնը, երևակայութիւն՝ որ միշտ ձախող վախճանի կը յանգի անիմաստ և անհասկանալի բառերու յօրինուածով. այս սխալն ուժգին բռնուած կ՚երևի Աբէլէ, որ խիստ համարձակօրէն ԲՐՈՒՆԸ հոնոկոր ԲՐԷԷՆԸ ԺՈՒՆԸ կը թարգմանէ։ Հանրակառք ՕՃԷ-ին ստուգաբանական թարգմանութիւնն է, իսկ հայ մը ինչ

(1) Սոյն ոտանաւորը Պ. Լեռենց, ներկայ տարւոյս մարտ ամսուն մէջ, յուղարկեց Տփխիսի «Աղբիւր» մանկական թերթին՝ ի տպագրութիւն։ «Աղբիւրը» ցարդ Պ. Լեռենցի ոտանաւորը չիտպեց և այս օրերս մեծ զարմանքս կարդացինք «Աղբիւրի» վերջին թուոյն մէջ, «փոխադարձ օգնութիւն» վերնագրով և «Ճաղարբեկեանց» տորագրութեամբ մի երկար ոտանաւոր՝ որ մեզ երևաց, իբր փոխառութիւն Պ. Լեռենցի ոտանաւորէն։ Կը հարցունենք թէ ի՞նչ կը նշանակէ մի այսպիսի արարք՝ զոր ես կանուանէի մի ուրիշ բառով թէ պատշաճից օրէնքն ինձ ներէին։

Ս. Հ.

(1) Զմոռանանք սակայն որ Ա. Մամլոյ գերբնական տեսակէտով հրապարակային թերթի արժանեօք օժտեալ մեր մէջ միայն երկու տեսակ թուղթեր կան, մին Ա. Մամուլ, միւսն՝ Հայրենիք։ ։ ։ (տես Ա. Մամուլ, ողողոտոս)։

(1) Ճաշակի վրայ չինիր վիճիր, կամ ճաշակը վիճելի չէ։

կը հասկնայ Ժոլ-Սիմոնէն, չէ՞ որ այս և սոսնց նման շատ բաներ ամեն կարգի ազդերէ ընդունուած են առանց փոփոխութեան և կ՚արտասանուին իրենց խիստութեամբն. բայց սակայն Բուրէյլն ցամաքի վրայ գործածելու մասին ինչ անկարելիութիւն կը գտնէ Սբ-Եւ որ միայն Ժոլին կը յատկացնէ զայն, մանաւանդ ինչ իրաւամբ Բուրէյլը Ժոլ-Սիմոնի փոխելով զայն կընենդէ, չէ՞ որ Բուրէյլ տեսակ մը ձուկի անուն է, ինչու չաշխատիր անոր պատմական բնութիւնը քննելու և հիմնական բառէն չշեղելու. եթէ այս կերպով յաջողի հայերէն բառ մը յօրինելու՝ միթէ կը-ծանիք ուրանալ իրեն գնահատելի ծառայութիւնն առ հայ լեզուն . . . . հապա ինչ պէտք է ըսել դոկտոր Նոթոբրին, այսչափ խոշոր սխալ կրնայ մտքաւիլ . . . սխալ՝ որ թէ իմաստի և թէ պաշտօնէութեան մասին իր կրկին ձախողութիւններն ունի. ինչ յանցանքի տակ էին ուրուրուեան պաշտօնեայ բառերն, որք ամեն լեզուի մէջ միօրինակ կը գործածուին։

Շարունակելի Կ. Ս. ԱՆԹԱՌԱՄ

ՔՐՈՆԻԿՈՆ

Մեր անցեալ թիւերէն միոյն մէջ բան էինք թէ նախորդ տարիներու համեմատութեամբ, այս տարի գաւառիս գլխաւոր բերքերէն եղող չամիչի և թուզի գիները շատ իջած են։

Դժբաղդաբար գնոց այդ նըւազումը տակաւին կը շարունակէ և այդպանք ու երկրագործք միևնոյն յուսահատ վիճակի մէջ կը մնան։ Սակայն եթէ աւելի յուսահատեցուցիչ վիճակ մը կայ, ոչ թէ միայն գիներուն իջնալն. է այլ արտադրութեան դադարումը։ Այդպանաց շատերն այժմ ցած գիներով իսկ չեն յաջողիր իրենց բերքերը վաճառելու։ Այսօրուան գիներն տակէ մէկ ու կէս տարի առաջ եղած գնոց գրեթէ մէկ երրորդին կը համապատասխանեն։

Արդ, երկրագործք գնոց այս նուազման պատճառը բերքերու առատութեան վերագրելով, մէկ երկու տարի առաջ անկուած այգիներն ու թզենիները քանդելու որոշում առեր են։ Այս վճռին սատագիւ ցաւալի է, վասն զի մեծ հարուած մը կը համարուի մեր գաւառի բնակիչք համագուին թէ, այգիներն ու այլ հոդագործական զործողութիւնք նուազ, խիստ նուազ ծախքով կրնան կատարուիլ՝ երբ գիտութեան և արուեստին ցուցած և հայթայթած միջոցներու դիմեն։

Երկրագործք իրենց օգուտն ու մանաւանդ շահը՝ ոչ թէ գնոց յաւելման, այլ աւելի ծախուց խնայողութեան մէջ կը պարապուին փնտռել։ Երկրագործութեան մէջ մեզմէ շատ աւելի յառաջադէմ Եւրոպայի երկրագործաց գործիքներն՝ եթէ մեր երկրագործք ևս գործածեն, կասկած չկայ ամենեին որ ծախքէն հարիւրին վեցնուն և գուցէ ալ աւելի կը շահին։ Օրինակի ազագաւ, եթէ արտաքոյ մ՚այգեստանի համար երկու հարիւր դահեկան ծախք կ՚ընեն մեր երկրագործք, Եւրոպական գործիքներու գործածութեամբ ութսուն դահեկան ծախքի միայն կարօտութիւն պիտի ունենային։ Այսպէս, մեր գաւառին այգիներուն ու պարտէզներուն օգուտն աւելի պիտի տեսնուէր այդ գործիքներու և մեքենայից գործածութեամբ, միջոց մը՝ որ երկրագործին ծախքն անհնարին կերպով նուազելով, իր բերքէն նորէն պիտի շահէր եթէ նոյն իսկ հինգ դահեկան դին ունեցող վաճառքն երկու դահեկանի վաճառէր։

—

Դիտութիւն և հատաք թէպէտև անհաշտելի են իրարու հետ, մանաւանդ բժշկական իրաղրոց մէջ, բայց քանի որ ամեն կրօնից սիղբուանքներէն մին է աղօթքով ու հաւատքով բուժում դանել, ուստի աւելորդ չենք համարիր մեր ընթերցողաց իմացունել, թէ քանի մ՚օրէ ի վեր երեքլեզուեան յայտարարութիւն մը կը շրջադայի քաղաքիս մէջ, որ կը յայտարարէ հաւատակուութեան թէ «Թարիգաթը ալիէ ըէֆիսէ խիւլէֆասընատ, ֆիյ էլ ասըլ Պաղատատի էլհաճ շէյխ Էսատ էֆէնտի» մահկանացուացս վրայ ծանրացող անխիր բոլոր հիւանդութիւն և ախտ «Պա իզն ուլլահ ու թաալէա» կը բուժէ սոսկ կարդալով։ Այս երանելի շէյխը կը վերարերի այն ուխտին՝ որոյ հետևողք որածայր երկաթ կը խօթեն իրենց այտին վրայ։

Յայտարարութիւնը տաճկերէնին, հայերէն և յունարէն լեզուներով գրուած է, և տաճկերէնին վերջն հետևեալ տողերն յաւելեալ են.— «Հէր քիմ չաւ փարագայը օգուտեուպատ տին գարատաշլարընա կէօսթէրմէզակ բահմէթուլլահատան մնհրաւմ՝ ալրուն, վէ հէր քիմ չաւ փարագայը գասատէն փարէլէրսէ Փէյղամպէրինին չէֆատսընատան մնհրաւմ՝-օլրուն։ Այսինքն, ով որ այս թուղթը կարդալով իր կրօնակից եղբայրներուն չբաշխէ՝ հանդերձեալ կենաց բարիքէն զուրկ ըլլայ, և ով որ այս թուղթը չարամտութեամբ պատռէ՝ Մարգարէին բարեխօսութենէ զուրկ մնայ։»

Եթէ ստուգիւ լոկ կարդալն է երանելի շէյխին դարմանն և որ և է դեղ չպիտի տայ իրեն դիմաղ հաւատացելոց, ասոր ըսելիք մը չունինք։ Հաւատք իրեանց կեցուցցեն զնոսա։ Բայց եթէ կարդալէ զատ նիւթապէս դեղ ալ հայթայթելով զրաղի, այն ատեն չենք կարծեր որ առողջապահական վերատեսչութեան ուշադրութենէն վրիպի երանեալ շէյխը։

—

Մէնթէշէի նոր կառավարիչ կարգուած Միւմթազ պէյ Դաղ. Մէսամբրի ընկերութեան Բիո—Կրանտէ նաւով Պօլսէն քաղաքս հասաւ, և երէկ մեկնեցաւ իր պաշտօնատեղին։

—

Նոյնպէս Այտընի Բէյիֆի Միւրալայ կոչուող Բիֆալի փաշա քաղաքս հասաւ և ասոր մեկնեցաւ իր պաշտօնավայրը։

—

Կէսարիոյ գետին ընթացքը փոխելու համար գաւառիս գլխաւոր երկրաչափ Ասլանեան էֆէնտիի կողմանէ ծրագիր մը յօրինուած և Այտընի ու Բասապայի երկաթուղեաց տնօրէն պարոնայր Բըրսէրի և Բէմրի քննութեան յանձնուած էր։ Մանրամասն քննութիւններէ ետև, երկաթուղեաց տնօրէնք խիստ լաւ գտած են Ասլանեան էֆէնտիի ծրագիրը, և այս մասին իրենց խորհրդածութիւններն ընդհատ պիտի ներկայեն վեմիկառավարչին։

—

Ալէքսանդրիոյ Պարսկական հիւպատոս Համի Մէհմէտ Խան, իր պաշտօնատեղին երթալու առթիւ շաբաթ օր քաղաքս հասնելով վեմ. կառավարչին այցելեց։

Մէհմէտ Խան քանի մը տարի առաջ մեր քաղքի պարսկական ընդհանուր հիւպատոսութեան պաշտօնը կատարած է, և ուստի քաղքիս զանազան հասարակութեանց համակրանքն արդէն կը-բաւած ըլլալով, շատերու թախանձանաց վրայ մէկ շաբաթ պիտի մնայ մեր քաղաքը։

—

Քլագումէնի մարբանոցին մէջ քարանթիւնանին լրացուցնող չորս շոգենաւերու ևս արձակում տրուած է։ Քարանթինա անցուցնող ճանրարդաց վիճակը խիստ գոհացուցիչ է։

—

Տէնիզլիի Մութէսարիֆը կը-դրէ տեղւոյս կառավարութեան թէ, սեպտ. 27էն 28 լուսնալու գիշեր, յիշեալ տեղն երկու անդամ երկրաշարժի սաստիկ ցընցումներ պատահեր են, բայց բարեբաղդաբար որևէ վնաս չէ պատճառեր։

La
LOTERIE Des ARTS DECORATIFS
de FRANCE.

Գաղղիոյ Ճքարուեստից Վիճակահանութիւնն արտօնեալ է ներքին գործոց նախարարութեան կողմէ, նուիրել հատարակութեան մասերու բաժանեալ և երրորդ ու վերջին վիճակահանութեամբ (որ տեղի պիտի ունենայ ի Բարիզ, Փալէ տը Լէնտիսֆէրի մէջ առաջիկայ դեկտեմբեր 31ին) 770,000 ֆրանքի դրամարը որ 103 բաժիններու բաժնուած է հետևեալ կերպով.—Մի մեծ բաժին 500,000 ֆրանք, մի մեծ բաժին 100,000, մի բաժին 50,000, երկու բաժին իւրաքանչիւրը 25,000, մի մի բաժին 10,000, քսան բաժին իւրաքանչիւրն 1000, եւթսուն բաժին իւրաքանչիւրն 500։ Բաժինք վճարելի են զուտ դրամով Բարիզի Պանքաը Ֆրանս դրամատունը։

Տոմակաց գինն է ՄԻԿ ՖՐԱՆՔ։ Տոմակներն ուզողն կրնայ դիմել ի փոխարէն դրամատանց տոմակներու, Զէֆերու և Մաքսաբերու Պ. Հանրի Ավենելի վրայ, որ է Տնօրէն վիճակահանութեան Ճարտարարուեստի Պալատին մէջ, թիւ 4 Դուռն, ի Շանզ—Էլիզէ։ ԲԱՐԻԶ

M. Henri Avenel, Directeur de la loterie, au palais de l'Industrie, Porte 4, Champs—Elysées, PARIS

ELIXIR DENTIFRICE

ԷԼԻՔՍԻՐ ՏԱՆԹԻՖՐԻՍ ակադայ մաքրող հեղուկին գործածութեամբ, բոլորովին կանցնի

ԱԿՌԱՆԵՐՈՒ ՑԱՒԸ

ՓԷՆԷՏԻԿՏԵԱՆ ԿՐՕՆԱՒՈՐՆԵՐՈՒ ԳԼԽԱՒՈՐ ՏՕՊ ՄԱԿԻԻԼՕՄ

իբր ամենէ մեծ ոսկեվարձատրութիւն Պրուսէլի մէջ 1880ին երկու հատ ոսկի շքագրամ ստացած է։ Իսկ արքայ Փիէր Պուռսոնի կողմանէ 1873ին հնարուած է

EAU de ZENOBIE

ԶԷՆՈՊԻԱՅԻ ՋՈՒՐԸ

որ մաղերուն իրենց նախկին գոյնը տալու համար եղական ջուրմ՚է և քիչ օրուան մէջ արդիւնքը կը տեսնուի։ Գործածութիւնը խիստ դիւրին է։ Այս հեղուկը ներկ չէ, այլ ընտիր դեղախառնը ջուրմ մը, որ մաղերը զօրացունելով թափիլը կարգիլէ և իրենց նախկին գոյնը կուտայ։

ԼԱՀՕՌԻ ՓՈՒՏՐԱՆ

փակչող, կակուղ և փայլուն է։ Լահօռի Ֆոբուրգին մէջ կը բռնագակին թէ բրինձի փոշին և թէ մինչև հիմա գործածուած փոշիներուն (փուտրա) ընտիր յատկութիւնները։ Այս փոշին եթէ միշտ գործածուի, մարթին՝ գեղեցկութիւն և փայլունութիւն մէկուտայ՝ և կը պահպանէ զայն։ Այս փոշին քսուելէ վերջ պէտք է որ բարակ լաթով կամ կակուղ վրձինով մը սրբուի։

ՏՈՌԹՈՐ ՌԻՇԱՐԻՆ ՆԻՐԿԸ

խիստ կատարեալ և ընտիր ներկ մ՚է։ Գործածելէ առաջ մաղերը լուալու առանց պէտք կենալու՝ մաղ և մօրուք կընիրկէ և մարթին վրայ ամենեին բիծ չձգէր։

Ընդհանուր գործակալն է Պօրսա Հիւկիւրի փողոց 3 թիւ, 1807ին հիմնեալ՝ ընկերութիւն՝

ԱՍԷԿԻՆ

*

Բոլոր ասոնք կը ծախուին Իզմիրի ընտիր հատուցիներ ծախողներուն, դեղարաններուն, դեղագործներուն և այլն քով։

Ասիական տաճկաստանի համար ընդհանուր գործակալն է

ԺԱՆ Ժ. ՖԻԼԻՓՈՒՆ
Իզմիր, Ֆրանկայ թաղ
Ռիւկի Ֆէրխանէն։

LONDON PHARMACY

Իզմիր, 1 Յուլիս 1884

Պարոնայք Ա. Մուռ և ընկերք պատիւ ունին ծանուցանել քաղաքիս բժիշկներուն, վաճառականներուն և ընդհանրապէս հասարակութեան թէ, իրենց դեղարանին մէջ ՖԻՄԻԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԼՈՒԹԵԱՆՑ ԱՇԽԱՏԱՐԱՆ մը աւելցուցած են ընդ անօրինութեամբ մի մասնաւոր քիմիագէտ, զոր յատկապէս Եւրոպայէն կանչած են։

Պարոնայք Ա. Մուռ և ընկերք արդէն պատրաստ են որակական և քանակական (qualitative et quantitative analyses) մարրալուծութիւններ և մանրադիտական քննութիւններ ընելու ամեն տեսակ գործարանաւոր և ոչ-գործարանաւոր նիւթերու վրայ, ինչպէս են հանք, թոյն, ջուր, գինի, մէզ, ոսֆիոն, բոյս և սունկ և այլն և այլն։

Maladies Secrètes

ՄԱՆՈՒԿ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Արմատէն կը բժշկուին իմ մեթոտովս՝ որ հիմնուած է գիտական նոր խուզարկութիւններու վրայ, նոյն իսկ եթէ այդ հիւանդութիւնք յուսահատեալ վիճակի մ՚ալ հասած ըլլան։ Կը բժշկեմ նաև պատանեկանութեան ժամանակ սերմնահոսութենէ և ջղային տկարութեանց ցաւալի հետևանքներն և անկարողութիւնները։

ԳԱՂԻՏՆԻՔ ԴՈՒՐՍ ԶԸՏՐՈՒԻՐ

խնդրեմ հիւանդութեան ճիշտ նկարագրութիւնը ղրկել ինձ։

ՏՈՔՏՈՐ ՊԷԼԼԱ

Անդամ բազմաթիւ գիտնական ընկերութեանց

Dr. BELLA
Membre de plusieurs sociétés scientifiques.
6. Place de la Nation 6.
ԲԱՐԻԶ—PARIS

IMPORTANT

EPILEPSIE

Spasmes, Eclampsie et Névroses

Լուսնոտութիւն (ապա)
Ջղաձգութիւն (սբ աղմ՝)
և ամէն ֆէրդ
Ջղային հիւանդութիւնք
ՀԻՄՆԱՊԷՍ ԿԸԲՈՒԺՈՒԻՆ
իմ մեթոտովս.

Դրամական հաւուցմունք բժշկուելէ վերջ կը տրուին։
Դարման կը տրուի թղթակցութեան միջոցաւ։

ԲՐՌԹ. ՏՈՔՏՈՐ ԱԼԲԵՐԹ
Prof. Dr. ALBERT
Honoré par la société scientifique française de la Médaille d'or de 1re classe pour mérites distingués.
6. Place du Trône 6.
ԲԱՐԻԶ — PARIS.

C. N. LEVENDOPOULO

Գ. Ն. ԼԷՎԷՆԴՈՊՈՒԼՈՅ

ԶՄԻՒՌՆԻԷ

Ֆրանկայ թաղ, Ն. Ալեքսիի Փերխանէն
(Փափուչիներու եկեղեցիին դէմ)

Այս վաճառատան մէջ կը ծախուին, թէ մեծ և թէ փոքր քանակութեամբ կոճակներ, երիզներ, ժապաւէններ, զարդեր, ասեղնագործութիւններ, բուրդ, ասեղ, լաթիկնեակներ, շապիկներ, վզնոցներ, փողկապներ, գուլպաներ, տղու գլխարկներ, ծաղիկներ, վետուրներ, հովանոցներ, հատեղէններ, մանկանց խաղալիկներ, մանրազգեստ կտաւներ (մուշլմա), պատառաքաղ և դանակ, հարմոնիկոն (արմոնիք), կիթառ, քնար, սրինգ, օրգոնէտ, և այլն և այլն։

Ապրանքի մեծիտը 33 զուրուշի հաշիւ կ՚ուտնուի։

Mc. Caw, Stevenson and Orr d'Islande.

ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ ՀԱՄՈՐ ԴՈՒՆԱՒՈՐ ԱՊԱԿԻՆԵՐ

Ապակիի վրայ գոյներու ամենակատարեալ նմանութիւն։ — Խիստ դիւրինկերպով կը փակցուին։ — Գոյները անաւէր են և երաշխաւորեալ։—Գիները բացառիկ կերպով աժան են։ Ամբողջ Տաճկաստանի և Եգիպտոսի համար միակ գործակալ.

Ց. Դ. ՎԷՄԵԱՆ և ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, Զմիւռնիա, Եուսուֆի Ֆէրիանէն թիւ 20։

Կը ծախուի նմանապէս Պ. Ֆ. Քասարիի վաճառատունը Ֆրանկայ փողոց, ինչպէս նաև Պ. Ա. Նոռայի և ընկերութեան վաճառատունը, Շիչէճիլէր ճատէսի։

MOORE'S

ԿԻՐՈՍ

ՈՏՔԻ ՓԱՐԱՌՈՒՆԵՐՈՒՆ (ՆԱՄԷՐ) ՀԱՄՈՐ ԱՆԵՎԻՐԷՊ ԲՈՒԺԱՌՄԱՆ, Ի Դերեւոյթ «ԼԻՐՈՆՏՐԸՆ ՖԱՐՄԱՍԻ»

ORPHELINAT GREC
ՅՈՅՆ ՈՐԲԱՆՈՑ ԶՄԻՒՌՆԻՈՅ

ԱՐՏԱՍԱՎՈՐ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Այս վիճակահանութիւնը բացառական է՝ տոմսակներն ստացողներու ընծայած իր մեծ բաղդին, իր լաւներուն թուոյն, բնութեան և բաղադրութեան պատճառաւ։ Լաւներուն բուն արժէքը նոյն իսկ հանուած տոմսակներու ամբողջ դիներն բարձր է։

Առաջին և մեծ լաւ է գիւղական ընդարձակ տուն մը, որ չրջապատեալ է 14,500 քառակուսի կանգունի մօտ լայնածաւալ պարտէզի մը։

Հետեւող 51 լաւները կը բաղկանան պարտէզներէ, լեցուած ծովու եղերքներէ, որք կը դըտնուին Կէօղթէփէի ամենէ նշանաւոր մասին վրայ, և որոց ամենէ փոքրն ունի 15 կանգուն երես և 36 կանգուն երկայնութիւն։

Տոմսակաց թիւն է 3315, իւրաքանչիւրին դիներն է մէկ ոսկի օսմանեան։

Վիճակահանութիւնը պիտի կատարուի առաջիկայ դեկտեմբեր ամսոյ մէջ յատկապէս կազմուած միջազգային մասնաժողովի մը հսկողութեան տակ։ Աւելի մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել յունաց Որբանոցը ուր ղետեղուած է ծրագիրն ու պայմանները։ Նաեւ իւրաքանչիւր տոմսակ կը կրէ իր վրայ լի ու լի բացատրութիւնները։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՈՐԲԱՆՈՑԻ

ԹԷՅ

Զինատանէ և Ճավայէ ուղղակի ներաբերուած թէյերու ամենաընտիր տեսակներ կ'ծախուին խիստ չափաւոր գիներով

Ց. Դ. ՎԷՄԵԱՆ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մթերանոցը, Եուսուֆեան Ֆէրիանէն թիւ 20։

Grande Distillerie Centrale de Paris—, Bordeaux, Charanton, Havre & Bruxelles.

Eugène de Francony Livourne Bordeaux.

Այն հռչակաւոր գործատանց գինիները, գոնեաքները և ամեն տեսակ անուշ ոգելից ըմպելիներու ամենաընտիր եւ աժան տեսակները կը ծախուին՝

Ց. Դ. ՎԷՄԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

մթերանոցը Եուսուֆեան խան Ն՝ 20

THE

LIVERPOOL & LONDON & GLOBE

INSURANCE COMPANY

ԼԻՎԷՐՊՈՒԼ և ԼՕՆՏՕՆ և ԳԼՕՊ

ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Աշխարհս ծել գոնուած հրդեհի ապահովական ընկերութեանց

ՄԵԾԱԳՈՅՆԸ

Դրամագլուխ ի պատրաստի 6,679,175 Մթր. ոսկի

1881 տարեկան հասոյթ 1,632,484 » »

Ընկերութիւնը հիմնուելէն ի վեր վճարած կորուստը 17,742,921

Անհանգամանալի պատասխանատուութիւն բաժնեկիրներու

—o—

Այս ընկերութիւնը կապահովէ հրդեհի դէմ թէ՛ Իզմիրի և թէ՛ շրջակայից մէջ շէնքեր, կահկարասիներ, անշարժ գոյքեր, ապրանքներ, գործարաններ եւ։ Անգլիական ամենէ մեծ ապահովական ընկերութեանց պայմաններուն համեմատ։

Ընկերութիւնը կապահովէ նաև կեանք, ոչ կանոն օրիա, ցկեանս եկամուտ, (rente viagère) եւ եւ

Ապահովելոց տրուած վերջին բաժնեգինք (չահու բաժանումով մինչեւ) 1 3/4 % եղան, տարեկան ապահովեալ գնոյն վրայ։

Գործակատար
ՋՕՆ Տ' ԱՆՏՐԻԱ

Ֆրանկայ թաղ, Անթուան տ'Անտրիայի Ֆէրիանէն

Ապահովիլ ուզողը կրնայ դիմել նաև Եօշ-Պէյէթէն Փոխ Գործակալը Ս. Սպարթալեան եղբարց տեղատատուները։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ

Ճօն Ա. Ա. Կոռ



Ապահովել ուզողները պէտք է դիմեն առ Պ. Յ. Կ. ՀԻՄՆԵԱՆ, Սէֆերեան խանին քով՝ Եսայեանց մաղազան։

ՎԻԷՆՆԱՅԻ ԿԵՆԱՑ ԵՒ ՀԱՆԴՍՏԵԱՆ ԹՈՇԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿ.

Compagnie d'Assurance Viennoise—Vie et Rentes Viagères-

Վիէննայի Կենաց և Հանդստեան Թոշակի Ապահովութեան Ընկերութիւնը խիստ շահաւոր և դիւրամատչելի պայմաններով ապահովութիւններ կ'ընդունի ամեն կարգի և հասակի անձանց.

Ա. Ուղղակի մահուան դէմ ապահովութիւն։

Բ. Որոշեալ ժամանակէ մը վերջը վճարելի ապահովութիւն։

Գ. Փոքրիկ տղայոց և աղջկանց դրամագլուխ և օժտի ապահով.

Ընկերութիւնը իւր մօտ ապահովեալ անձինքը կ'ընդունի իւր շահուն իրր ընկեր, և միշտ 3 տարին անգամ մը ապահովեալին վճարելի մէկ տարուան տուրքին վրայ միշտ % 40 բաժանելի շահ մը երաշխաւորելով։

Ընկերութեանս գլխաւոր և լիազօր Գործակատարները. ի Պոլիս, Տէարք Լբպէ է Ֆիլ Վիկթոռի գրամատունն է։

Զմիւռնիոյ Գործակատար Մ. Օսկար Միրզան Լօքալ Էքսլ Էվանժէլիք Ն՝ 27։

Եւ որովհետեւ այս Ընկերութեան մանաւոր և շահաւոր պայմանները շատ ճիւղերու կը բաժնուի, առ այժմ պէտք է դիմել առ Մ. Նազարէթ Եաղբճեան, Վերատեսուչ Թուրքիոյ, որ յատկապէս պաշտօնով եկած է հոս քիչ մը ժամանակի համար, որպէս զի լիովին պէտք ըլլալիք տեղեկութիւնք գոհացուցիչ կերպիւ լինին։

CHEMIN DE FER D'AIDIN

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ, ՍԿՍԵԱԼ 17/29 ՅՈՒՆԻՍ 1884

ՊՈՒՃԱ

ՀԱՍԱՐԱԿ ՕՐԵՐ

Ժամ 6,40.—9.—Կ. Ա. 12,15.—*5,15.—*7,20Կ. Ե. Իզմիրէն
» 6,30.—7,30.—8,25.—9,40. —Կ.Ա. 2,30—*6,30—*8.—Կ.Ե. Պուճ.
Ամեն չորեքշաբթի երթալ 2,30—Կ. Ե. Վերադարձ 3,45.—Կ.Ե.

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐ

Ժամ 6,40.—9.—10,45.—Կ.Ա. —2,30—4.15—6—Կ. Ե. Իզմիրէն
» 7,30.—8,25.—9,40.—12.—Կ. Ա. 3,45.—4.50—7,30.—Կ.Ե.Պուճ.

ՍԷՎԱՏԻ ՔԷՕՁ

ՀԱՍԱՐԱԿ ՕՐԵՐ

Ժամ 6,40.—9.—Կ. Ա. | *5,15.— Կ. Ե. Իզմիրէն
» 8.— 9,50.—Կ. Ա. | *6,15.— Կ. Ե. Սէվտիքլէյէն
Ամեն Չորեքշաբթի երթալ 2,30— Կ. Ե. Դարձ 3,30 Կ. Ե.

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐ

Ժամ 6,40.—9.—10 45.— Կ.Ա. 2,30 —6.—Կ.Ե. Իզմիրէն
» 8.—9,50.—11,45.— Կ.Ա. 3 30.—7.5 Կ.Ե. Սէվտիքլէյէն

*Նշաձեւ օրեր 15 վարկեան ուշ կերթան
» » 30 » » »

ՀԱՆԱՊԱԶՕՐ— Սէրայքէյի համար 8.— Կ.Ա.
» Նազէլիի » 8.—10,10.— » »
» Ա.յատուրքի » 6.40.—8.—10,10.— » »
» Թիրէի » 8.—10,10.—12.— » »

SMYRNA AND CASSABA RAILWAY

ԴԼԽԱՒՈՐ ԳԻԾ

Սկսեալ 22 Սեպտեմբեր 1884

ԿԱՌՈՒՑԻՆ ԿԸ ՄԵԿՆԻ

ԻԶՄԻՐԷՆ ԱԼԱՇԷՀԻՐ

Կը մեկնի	Իզմիրէն	Կ. Ա. 9 30.	Կ. Ե. 1 50.
Կը հասնի	Մէնէմէն	» 10 39.	» 2 59.
»	Մաղնիսա	» 11 55.	» 4 14.
Կը մեկնի	Մաղնիսայէն Դասապա	» 12 7.	
»	Սալէհլի	Կ. Ե. » 2 23.	
»	Ալաշէհիր	» 3 41.	

ԱԼԱՇԷՀԻՐԷՆ ԻԶՄԻՐ

Կը թողու	Ալաշէհիր	Կ. Ա. 10 15	Կ. Ա.
»	Սալէհլի	» 11 33	
»	Դասապա	» 12 59	
»	Մաղնիսա	Կ. Ե. 1 55	8 27
»	Մէնէմէն	» 3 12	9 50
Կը հասնի	Իզմիր	» 4 20	10 49

SMYRNA AND CASSABA RAILWAY

BOURNABAT

ԻԶՄԻՐԷՆ ՊՈՒՐՆԱՊԱՏ

Սկսեալ 22 Սեպտ. 1884

ՀԱՍԱՐԱԿ ՕՐԵՐ

Կէս օրէն առաջ ժամ		Կէս օրէն ետեւ ժամ			
7.	8. 9. 12.	3 15.	4 30.	5 45.	6 45.

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐ

Կէս օրէն առաջ ժամ		Կէս օրէն ետեւ ժամ			
8. 9. 15	10. 30 12.	2. 20	3. 10	4. 5. 13	6. 30

ՊՈՒՐՆԱՊԱՏԷՆ ԻԶՄԻՐ

ՀԱՍԱՐԱԿ ՕՐԵՐ

Կէս օրէն առաջ ժամ		Կէս օրէն ետեւ ժամ			
7. 30 8. 30 9. 35		1. 30	3. 45	5. 15	6. 15 7. 15

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐ

Կէս օրէն առաջ ժամ		Կէս օրէն ետեւ ժամ			
8. 30 9. 45 11.		12. 20	2. 40	3. 30 4. 45	6. 7.

ԱՐՇԱԼՈՅՍԻ ՏՊԱՐԱՆ, Ի ՍԷՎԼԻ ԽԱՆ ՎԵՐՆԱՑԱՐԿ ԹԻՒ 17